ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 224
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքը (Շվանիձոր բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Մեղրի համայնքի (Շվանիձոր բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքը (Շվանիձոր բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Սյունիք-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի (Շվանիձոր բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
0.06367 հա մակերեսով հողամասը (09-074-0443-0041 կադաստրային ծածկագրից) և 0.05841 հա մակերեսով հողամասը (09-074-0443-0042 կադաստրային ծածկագրից)՝ ընդհանուր 0.12208 հա մակերեսով հողամասը գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք	0.06367 հա մակերեսով հողամասը (09-074-0443-0041 կադաստրային ծածկագրից) և 0.05841 հա մակերեսով հողամասը (09-074-0443-0042 կադաստրային ծածկագրից)՝ ընդհանուր 0.12208 հա մակերեսով հողամասը հատուկ նշանակության հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Մեղրի համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Շվանիձոր բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի (Շվանիձոր բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա.Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «26» «հուլիսի» 2023 թ.